

11631

1534

Տ. Ա. ԱՍՏԵԶ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ  
Վ. ՄԱՐԴԻԿԱՐՈՒՅՑ ԱՆԽՈՏԱԿՈՒՔ

ՅԵ. ԶԵՂԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՈՎԻ

## ԱՌԵՎԱՏՐՈՎԱՆ

### ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Պ. Բ. Ֆ. Պ.

Փոխապես 6 ռուբլենից ՅԵ. 1.0.1.0.80.0.6

Գ. Ա Ր Ա Մ Ա Ր Ա Կ Ո Ւ Ր Ո Ւ Բ

ԳԵ Տ Տ Ա Գ Ո Ւ Բ Հ Բ Ո Ւ Բ Գ Ա Խ Ո Ւ Բ Ո Ւ Բ

Ըստվ. թ. 1928

3(075)

Զ-97

1928 N 856  
25 SEP 2006  
1 DEC 20

Հ Հ 2589

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ 4 ԴԱՐԵՐ ՅԵՎ. ՄԱՐԴԿԱՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ Հ 4

3 (025)

Զ - 97 ՑԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՈՎԻ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ  
ԿԱԳԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

ՊՐԱԿ Դ.

Փոխադրություն ուղարկելից ՑԵ. 1, 0, 1, 0, 8 Ա. Դ.

Գ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНО-СЕВЕРНОГО  
Академии Наук  
СССР

ՀՀ - ՀՀՀՀՀՀ

ՊԻՄ Կ Ա Խ Բ Հ Ր Ա Մ Վ Ի Հ Ա Ր Ա Ր Ո Ւ Խ Բ

ՏԵՐԵՎԱՆ - 1928

13.04.2013

11631



59993-66

№ 766

Դրանեալիք № 788 (ր)

Տիրամ 4000

Պետական առողջին տպարտն Վաղարշապատում Պատվեր 183.

## ԶՈՐՈՐԴԻ ՄԱՍ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՂԻՏԱԼԻԳՄԻ ՇՐՋԱՆԻՑ

### 1. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՊՈՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

«Մի բարեհաճեք, ձերդ մեծություն, անհանգստանալ, այդ զզվելի ժակ խուժանները մեզ չեն կարող գիտչել՝ ձեռքերը կարճ են, այս անտառիկ աշատակի մեջ զուք միանգամայն ապահով եք»: Ազաղես եր հանգստացնում մարածախար ֆրանսիական թագաժառանգի կնոջը: Սա հոտած եր իր աղջկա և պալատական կանանց հետ Մոքաղաքի մոտ բարձրացող զզակի վահլիճում: Այս վահլիճը ցած եր, կիսամութ, վատ եր լուսավորվում փոքր, նեղ պատուհաններից, բաց տին կիսախավարումն ել կարելի յեր հեշտությամբ նկատել արկինների յերեսին տիրող հուզմունքը: Նրանք, լստ յերեսութին, քիչ ելին հավատում այդ մարածախատի հանգստացուցիչ խոսքերին, վորն արգեն անքան եր զառամել, վորչեր կարող իր փոքրաթիվ պահակախմբով յետ մղել թշնամուն: Ուշիւշով հետեւելով բաղաքի

կողմից յեկող աղմուկին՝ տիկինները՝ շարունակ թարմ և հավաստի տեղեկություններ եցին պահանջում դդյակի գիտարանի վրա կանգնած պահանձից, վորն անընդհատ դիտում եր, թե ինչ է կատարվում քաղաքում:

Ցեվ հիբավի. մի աարսափելի բան եր կատարվում Մո տապիտական դդյակի սակավաթիվ բնակիչների ու բնակչուհիների համար:

Միայն մի գետով դդյակից բաժանված քաղաքում շարունակ հավաքվում եցին գյուղացիների նորանոր խմբեր. դադիս եցին կործանելու ան դդյակը, ուր ապաստան եր գտել թագաժառանգի ընտանիքը:

Արդես յերկու շարթից ավելի յեր, վոր ամբողջ հյուսիսային Ֆրանսիայում զյուղացիությունն ապստամբել եր կալվածատերերի գեմ (այդ պատահել եր 1356 թվին). մի զյուղ մյուսի հետեւից, զինվելով յեղաններով, կացիններով, դանակներով, մանդաղներով և ձեռքն ընկնող ամեն բանով, հարձակվում եր՝ կործանելու իր և իր հարեանի անկուշտ կալվածատերերի դդյակները։ Սկզբում ամեն մի դյուզ առանձին եր գործում. հետո ամբողջ ապստամբության պոաչնորդ հանդիսացավ մի վաճի Գելուս Կալ, վորն աշխատում եր անկազմ հրասակախմբերից կազմել մի անդելի բանակ՝ ընդհանուր ծրագրով դործելու։

Այս խելացի առաջնորդն ըմբռնում եր գյուղացիներան սեփական ուժերի անբավարարությունը, ուստի և աջակցություն եր գործնում քաղաքի բնակչության դժորն տարբերի մեջ. Ցեվ հիբավի, շատ տեղերում ապստամբած գյուղացիներին միանում եցին մյուս գասակարգերից ել մարդիկ. Մսագործները, տակառագործները, ածխագործները, հյուսները, մանրավաճառները շատ անդամ գտնվում եցին այս ապստամբների խմբերում, վորոնք քարտոքանդ եցին անում, կողոպտում կալվածատերերի կարգածները, վոչչացնում նրանց թղթերն ու վավերագրերը։ Այսպես քարուքանդ եր արգած միքանի տասնյակ դդյակներ։ Այժմ հիբթը հասել եր Մո դդյակին։

Մո ամբողը շատ վատահելի ապաստարան եր համարվում, վորովհետեւ մատչելի յեր միտին քաղաքի կողմից, խոր գետի վրա ձգված կամքջի վրայով. մյուս յերեք կողմերը համարյա անմատաչելի եցին։ Սակայն ապստամբները՝ թվով 9000 հոգի, վորոշել եցին տիրել դդյակին, զիտենալով, վոր այգտեղ չկա կուվող զորք, այլ միայն պահակների մի փոքրիկ խումբ և թագաժառանգի կարգադրաթյանը աշխահղ թաղ կացած միքանի բարձրաստիճան տիկիններ։

Մո քաղաքի բնակիչները սիրով բաց արին ապստամբների տոջե իրենց դռները, քաղաքի

փողոցներում դրվեցին սեղաններ՝ ծածկված սփռոցներով, ուտելիքներով ու զինով։ Ամեն կողմից խմբվում ելին զինված քաղաքացիներ։ Տարձրաատիճան տիկինները դողում ելին լսելով զվարճացողների խառնիճաղանչ աղաղակները։ Նրանք սարսափահար չկտելին ինչ անեն։ Բայց ահա հանկարծ նրանց քաղցից անսպասելի կերպով ոգնության հասան յերկու համարձակ ասպետներ, վորոնք իրենց խմբերով վերադառնում ելին հեռավոր արշավանքից։ Պաշարվածները խանդավառությամբ լնդունեցին անսպասելի ազատարարներին այս ժամանակ, յերբ քաղաքացիներն ու զյուղացիներն արդեն պատրաստվում ելին հարձակվելու։ Յեվ հենց այս միջացին, յերբ սրանք կամքջի վրա ելին, ասպետները, չսպասելով նրանց հարձակման՝ հանկարծակի քայ արին գզակի դաները և կատաղությամբ հարձակվացին։ պաշարողների վրա։ Ժողովրդի համար անսպասելի յեր այս հարձակումը։ Նա ցնցվեց և կանգ առավ։ Ասպետներն ոգավելով այս շփոթակունից առաջացան։

Տեղի ունեցավ արյունահեղ կորի, ժողովրդական գործի գրությունը չափազանց աննպատակ. բոլոր առավելություններն ասպետների կողմն ելին, ներ կամքջի վրա պետք ե կուվելին՝ կուրծք կրծքի տված։ Ինչ կարող ելին անել

այսպիսի մենամարտի մեջ զյուղացիները, վորոնք պաշտպանված չելին յերկաթե սպառաղինությամբ, ինչ կարող ելին անել սրանց մահակները, մանգաղները, կացինները և կարճ զանակները, սրերի և նիղակների գեմ։ Հետի, անուժ, նրանք չկարողացան։ վիմագրել ձիավոր, ուժեղ տապեաներին, վորոնք վոտից մինչեւ զլուխ սպառաղինված ելին յերկաթով, և վորոնց յերկար նիղակները համառւմ ելին զյուղացիներին ավելի շուտ՝ քան թե սրանք կկարողանացին գործադրել իրենց խղճակի զենքերը։ Այսպիսով քաղաքացիներն ու զյուղացիները կովի հենց սկզբից ողբառություն կրեցին։ Նրանք սարսափահար սկսեցին փախչել, իսկ աղնվականները սլացան նրանց յետից և սկսեցին անխնա կոտորել։ Նըրանց վրեժինդրությունն անողորմ եր։ Նրանք քանդում ելին տները, յեկեղեցիները, թալանում ելին խռովարարների գուցքը։

Շուտով քաղաքն սկսեց վասկել ամեն կողմից, կրակի կարմիր լեզուներն սկսեցին բարձրանալ չորս կողմից, ծուխը կուրացնում եր աչքերը, անլախտ զոհերի վողբերը խլանում ելին քանդվող աների զոգոսցից։ Հրդեհը շարունակվեց քաղաքում մի քանի որ, սակայն առաջների վրեժինդրությունն այստեղ կանգ չառավ։ Նրանք հարձակվեցին հարեան զյուղերի վրա, սուանե-

յին բոլոր պատմհողներին, առանց վորոշելու անմեղներին մեղավորներից։ Այսպես ընկճվեցան ապստամբները Մո դղյակի մոտ, սակայն դրանով չընկճվեց զբուղացիական ապստամբությունը։ Ժակերի գլխավոր ուժը Գիլիոմ Կալի առաջնորդությամբ մնաց անխախտ և նույնիսկ ավելացավ։ Այդ զբուղացիներին այնքան բազմաթիվ ելին, վոր իրենց անպարահի ելին համարում Նրանց վրա յեկան ասպետների զորքերը թաղավոր Կարլոս Նավարացու առաջնորդությամբ Հեռաւաս Գիլիոմ Կալը սաստիկ համոզում եր իրեններին փոքր ինչ նահանջել, և թագնվել Փարիզի պատերի տակ, քանի վոր այդ մայրաքարքին այդ ժամանակ թշնամացել եր թաղավորի և տղնականության հետ և պատրաստ եր սպնելու զբուղացիներին, սակայն Կալի առաջարկը մերժվեց։

Գյուղացիները հույսը զրել ելին իրենց բազմության վրա, նահանջի մասին վոչինչ չելին ուզում լսել և հուզված ձայնով բղավում ելին, թե իրենք բովականաշափ ուժեղ են, և վոչ մի քայլ չեն նահանջիլ Վոչինչ չեր կարելի անել, պետք եր միայն ասպետական զորքերի մոտենալիս պատերազմական զիրք բանել։ Եռապ առաջ մղվեցին կառքերը, վոր միմյանց հետ կապված ելին յերկաթե շղթաներով. որանք վո-

խարինելու ելին պատճենեցներին, վորոնց միջով տապեաների ձիերը չելին կարող անցնել, կարի ասպետները հույս ունելին, թե հեշտությամբ կհաղթեն, ինչպես վոր հաղթել ելին Մո-ի կըսվում, սակայն շատ սիստվեցան։ Կառքերի անանցանելի պատի միջով նետերի կարկուտ թափվեց նրոնց վրա և ստիպեց նրանց նահանջել. այդ միջոցին նրանք զիմեցին ուխտազանցության, Նրանք ընդմիջում առաջարկեցին Գիլիոմ Կալին և կանչեցին իրենց բանակը բանակցության։

Գյուղացիների առաջնորդը շատ զբուրահավատ գտնվեց, առանց այլեացության զնաց թշնամութանակ, ուր նրան ձերբակալեցին։ Գյուղացիական զորքը կորցնելով իր առաջնորդին՝ զլուխը կորցրեց և ազնվականներից կոտորվեց։ Գիլիոմ Կալը զլխատվեց, նրա զլուխն անցկացրին շիկացած երկաթե ողակ՝ իրքե թագ։ Յերկար ծաղրեցին նրան, վորպես գյուղացիների թագավորի և վերջը զլխատեցին։ Այսպիսով վերջ աըրվեց գյուղացիական ապստամբության։

Հետագայում Ֆրանսիացում նորից ծագեցին գյուղացիական ապստամբություններ, կամ ինչպես անվանում ելին նրանց՝ ժաքը. բայց ամեն անգամ հաղթությունը մնում եր ազնվականության և ազնվական կառավարության կողմը։

## 2. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այս տեղի ունեցավ 1381 թվին, հունիսի 15-ի կեսօրին, Անդլիալի մայրաքաղաք Լոնգոնի ծայրամասում, քաղաքացին ընդարձակ հրապարակում, ուր սովորաբար ձիեր ելին ծախում։ Հավաքվել եր մի ահազին քաղմություն, 15—20 հազար մարդ։ Այդ որը առնավաճառի որ չեր, յեթե լիներ ել, տոնավաճառի համար այդ ամբոխը շատ շատ եր և ձիեր ել քիչ կային—ընդամենը 2—3 ասանյակ, քացի գրանիդ՝ այդ ամբոխի մեջ քաղաքացիներ համարյա չկային, բոլորը գլուղացիներ ելին։ Հրապարակի վրա հավաքված մարդիք կրում ելին զանազան գենքեր։ Նետ աղեղներ, նիզակներ, թրեր և նույնիսկ յեղաններ, կացիններ ու ծանր մահակներ։ Մեծ խոռվություն եր տիրում հրապարակում։ Մարդիկ խումբ խումբ հավաքված ուրախ-ուրախ խոսում ելին։ Այս ու այն կողմում լսվում ելին աղաղակներ ու ծիծաղի քրքիջներ։

— Անցյակ որը Զոն Բուլը պատմում եր,—առում եր մի խմբում կանգնած մի հաղթանդան յերիտասարդ՝ յեղանը ձեռին և կացինը դոսում, —յերը Աղամը փորում եր հողը և Ցեղան մտնում մանածը, այն ժամանակ ո՞վ եր աղան։

— Թող մեր վողորմած կոմսերից և պարուն-

ներից մինը բարեհաճի պատասխանել այս հարցերին, — ավելացրեց նա բարձր քրքջալով։

— Յեկ այդ, ինչպես ասում են, ուղակի տվել ե յերեսներին, — արտահայտվեց լսողներից մինը։ — Զոնը խելացի մարդ ե, նա ամեն ինչ ըացատրում ե ինչպես հարկն եւ Սկզբում, ասում ե, բոլոր մարդիկ հավասար են յեղել, այսպիս ևն դուրս յեկել բնության գրկից։ Հետագայում անպիտան մարդիկ անարդար կերպով նեղել են իրենց մոտիկներին, վորից և առաջ ե յեկել ճորտությունը։ Յեթե բնությունն ինըը ուղենար ճորտեր ստեղծել, հենց աշխարհի սկզբից կվորոշեր, թե ով պիտի լինի ճորտ և ով տեր։ Այժմ արդեն հասել ե ժամը գեն շպրտելու յերկարատեև ստրկության լուծը և ստանալու վաղուց ցանկալի ազատությունը։

— Յես կարծում եմ, ասաց շիկահեր յերիտասարդը, — վոր Զոնին դիվանապետ պետք և դարձնել։

Այժմիան դիվանապետը ժողովրդի և թաղավորության դավաճանն ե և պետք ե անմիջապես գլխատել նրան։

— Ճիշտ ե, բղավեցին բոլորը, վաղուց պետք եր արդարես անել, այդպիս ել կանենք։

Մի ուրիշ խմբում ել ուրիշ խոսակցություն եր տիրում։

— Շատ լերկանք պետք ե քաջ՝ գանք այստեղ, —  
անհոմքերութիւնը հարցը եց մի դեռախի, նիհար,  
գունատ մարդ, ուշախությունից փայող աչքե-  
րով: — Ժամանակն ե, վոր նորին մեծությունը  
շտապի և մեզ չստիպի սպասել նրա վողորմածու-  
թյանը լերկու ժամնից իվեր: Ես ինչի չի գալիս:

— Միքիչ սպասիր, սանիկս, կդա, չի կարող  
չդալ: Նա լերդվիլ ե Ուատ Տալերին, վոր կդա  
այսոր մեզ մոտ և կկատարի մեր բոլոր արդարա-  
ցի պահանջները, իսկ Տալերի հետ ինքո ել  
դիտես, վոր հանաք անելը հեշտ չե:

Հենց այդ միջնորդն ըստորի զլուխները դարձան  
հրապարակի այն կողմը, ուր ամբոխից վոքը ինչ  
հետու գտնվում եր լավ զինված ձիավորների մի  
խումբ: Այս խմբի առջև դեղեցիկ, սեաթուցը  
ձիու վրա նստած եր թիկնավւա, միջահասակ  
մի մարդ, կարճ սև մորուքով և արտահայտիչ  
թուխ գեմքով: Նրա ամբողջ կազմվածքը, սուր,  
թափանցիկ հայացքը ցույց ելին տալիս, վոր  
հաստատ ընավորության տեր ե և սովոր հրա-  
մաններ արձակելու: Նրա ամբողջ սալտառքինու-  
թյունը կազմում եր միայն մի փոքրիկ դաշույն:  
Սա Ուատ Տալերն եր, ապրաւամբած զյուզացի-  
ցերի առաջնորդը, վոր լեկել եր լոնդոն՝ պա-  
հանջիւու թաղափորից ազատություն և իրա-  
վունք:

Տալերը նայում եր այն կողմը, ուր կանգնած  
եր հիվանդանոցի ահազին շենքը: Անհամբերու-  
թյունը և սրտնեղությունը պարզ նկատվում ելին  
Տալերի լերեսին, լերբեմնապես բարկության  
կրակը առկայժում եր նրա խիստ, սև աչքերում:  
Բայց ահա հիվանդանոցի կողմից լերեաց մի  
ձիավոր, մոտ վազեց Տալերին և միքանի խոռք  
առաջ: Տալերը ուղղվեց թամփի վրա, արագ  
գալրձավ գեպի իր ընկերները և մի ինչ վոր հը-  
րաման տվեց: Իսկույն նրան շրջապատող բոլոր  
ձիավորները ցրվեցան հրապարակի վրա և շատ  
տեղերում լսվեցան «ուազմական դիրք բռնեք»  
հրամանը:

Բյուրավոր ամբոխը ծփաց, վորպէս վտանգ-  
ված մրջնանոց, խսակցությունները գաղարեցան  
և միքանի ըռպեցից հետո հրապարակի խառնի-  
ճաղանչ ամբոխի փոխարեն, լերեսները գեպի  
հիվանդանոց գարձրած կանգնած եր ուղիղ, խիտ  
շարքերով, մի ահազին զորագունդ, հուժկու և  
լուռ, իսկ նրա վերել լեղանների և նիզակների  
մի ահազին շարք: Սրանց առջև գտնվում եր  
Ուատ Տալերը՝ շրջապատված իր ոգնականնե-  
րով:

Միքիչ ել անցավ և հրապարակի վրա քազա-  
փի կողմից լերեաց մի խումբ ձիավորներ, առ-  
ջնից զնում եր մի գեռահաս ձիավոր, համարլա

պատահի — Ռիչարդ Թագավորը բարոնների, ասպետների ուղեկցությամբ, իսկ հետեւ ի Հոնդոնի քաղաքացիների զինված պահակը։ Յեկողները կանգնեցին ապստամբներից բավական հեռու։ Թագավորական ասպետներից մինը, Զօն Նյուտոնը, մի ասպետ ուղարկեց ուղմական կարգով կանգնած գյուղացիների մոտ, հրավիրելու նրանց առաջնորդ։ Տայերին թագավորի մոտ բռնակցության։ Տայերն անմիջապես հետեւ ասպետին միայնակ, առանց վորեւ ուղեկցի, զինված միայն մի գաշունով Գնաց գեկուցելու թագավորին գյուղացիների ցանկությունը։

Թագավորից 3—4 քայլ հեռու Տայերը կանգնեցրեց իր ձին։

Առաջինը խոսեց թագավորը։ Նա գժգույն երև և ձախն ել միքիչ գողում եր։

— Ահա յես յեկա ձեղ մոտ Յերեկ յես հայտարարեցի Մայենդում (Լոնգոնի մոտ) հավաքված ձեր յեղբալրներին, վոր համաձայն եմ կատարելու նրանց խնդիրը, այսինքն անգլիական թագորության սահմաններում բոլորը պետք եւ աշխավեն ճորտությունից, այնպես վոր այլևս վոչ մի ճորտ չի լինելու, իմ բոլոր հպատակների ապստամբության միջոցին կատարած բոլոր հանցանքները՝ սպանությունները, թալանը ներում եմ և բոլորին շնորհվում եթագավորական ընդ-

հանուլը խաղաղությունը, իմ բոլոր հպատակներն իրավունք են ստանում զնելու և ծախսելու բոլոր քաղաքներում, ափաններուն և գյուղերում։ Վերջապես հոդը, վորից առաջները զբուղացիներն ոդավում ելին անձնական ծառալություններով, այսուհետեւ միայն փողով պետք արվի և այն ել ակրը չորս պիհնսից վոչ ավելի։ Ահա այսպիսի իրավունքներ եւ տրվում ձեղ, վորի մասի կհրատարակվին իմ թագավորական կնքով կնքված հրովարտակներ։ Ել ինչ եք ցանկանում։

Տայերը բարձր և վորոշ պատասխանեց։

— Մենք ցանկանում ենք գարձյալ, վոր տերերին վերապահված անտառների և ջրերի սահմանները բացին բոլորի առջև, այնպես վոր հարուստն ել, աղքատն ել կարողանա ամբողջ թագավորության մեջ աղաւորեն ձուկ բռնել բոլոր լճերում ու գետերում, գազաններ վորսալ բոլոր անտառներում և հետո մինչև ալժմս թագավորը գտնվում եր վատ խոշնրագատունների աղգեցության տակ, վորից հասարակ ժողովուրդը սասարի ճնշվում եր, այժմս մենք խնդներս ենք ցանկանում առաջնորդել թագավորին ընդհանուր բարուրության համար։

Արյունը լցվեց թագավորի յերեսին, բայց հետո նա նորից սփրթնեց, յերեսում եր վոր բարեկությունն ու յերկլուղը կովում ելին նրա հո-

գու մեջ և չեր կարողանում վորոշել, թե ինչպես և ինչ պատասխանի:

Պատասխան չստանալով, Տաղերը լուեկվեց, նրա աչքերը խիստ փայլեցին: Նա մոտեցալ թագավորին և շեշտակի նալեռվ նրան՝ ասաց. «Յես սպասում եմ քո խոսրին, թագավոր, վոր հազորդեմ ժողովրդին»: Թագավորը շարուհակում եր լուել:

Տաղերը սաստիկ մոտեցավ թագավորին և բռնեց նրա ձիու սանձից:

Այսեղ տեղի ունեցավ մի ինչ-վոր անսպասելի բան: Թագավորի կողքին կանգնած Լողոնի քաղաքազլուխ Ուելվորսը, մտածելով, վոր թագավորին մահ և սպասնում, հանեց դաշույնը և խփեց Տաղերի վզին: Տաղերն ընկալի:

Նրան շրջապատեցին խիտ ցանցով թագավորական զինվորները և սպասնեցին իրենց թրերի հարվածներով: Այս բոլորը կատարվեց շատ տրագ:

Ապստամբները միանդամից չնկատեցին, թե ինչ պատահեց իրենց առաջնորդին, չնկատեցին նաև, թե ինչպես Տաղերին վոաներից ու ձեռներից քաշելով տարան մոտակա յեկեղեցին: Բայց վերջապես անեն ինչ նրանց պարզվեց: Ապստամբների շարքերը հանկարծ ցնցվեցին և տուրածվեց ահեղ տրառնջ, բոլորը բարձրացրին

իրենց աղեղները՝ պատրաստվելով արձակել թագավորի և նրա հետեւորդների վրա հազարավոր նեաեր, վրեժինդիր լինել իրենց առաջնորդի մահվան: Սակայն այդ վայրկյանին թագավորը քշեցիր ձին և ոլացավ, բայց վոչթեահեղ ամբոխից, այլ ուղղակի դեպի նա:

«Յես ձեր առաջնորդն եմ, ես ձեր թագավորն եմ, բացականչեց Ռիչարդը, ով իմ կողմն ե, թող հետեւի ինձ գեպի դաշտը, այստեղ կստանա ինչ վոր ցանկանում ե»:

Թագավորի անսպասելի յերեան գալը, նրա խիզախությունը և խոսքերի վճռական յեղանակն ամբոխի վրա խիստ աղդեցություն գործեցին: Յերկար գարերի ընթացքում ժողովրդի մեջ արմատացած հավատը գեպի թագավորը՝ վորպես ասածո ոծյալի, իր ազգեցությունն ունեցավ և ամբողջ շշմած ամբոխը, վորպես մի մարդ հետեւ թագավորին գեպի դաշտ: Ճիշտ ե, մեկ մեկ լսվում ելին ձախներ, վոր նախքան թագավորի հետ բանակցելը, պետք ե պահանջել նրանից հանձնել ժողովրդի գատաստանին Տաղերի սպանողին՝ Լոնդոնի քաղաքազլուխ Ուելվորսին, սակայն մինչ այդ, Ուելվորսն արդեն Լոնդոնում եր և մեծ հուզմունք եր բարձրացրել. թե թագավորը վտանգի մեջ ե, պետք ե ազտակել նրան: Իսկուն կազմվեց Լոնդոնի բուրժուաներից



լավ զինված մի խումբ և յեկավ թագավորին ոգության:

Ապստամբների մեջ չգանցեց մինը, վոր կարողանար Տաղերին փոխարինել, իսկ թագավորին ոգնության հասնողների յերեալը մեծ խըռովություն ձգեց Նրանց շարքերի մեջ։ Այս ըստը Նրանց ավելի զիջող գարձրին։ Իր կողմից թագավորն ել անվանդ չհամարեց մի անգամից սահմար քաշել և հրամայեց տալ ապստամբներին ազատագրական հրավարտակներ, առանց այն հավելումների, վոր խնդրում եր Տաղերը։ Հետո թագավորը հենց առահեղ դաշտի մեջ ասպետ ձեռնազրեղ քաղաքավորուխ Ուելվորովին՝ ինչպես և Լոնդոնի վաճառականներից իր միքանի տղդեղիկ և հարսուսա կողմակիցներին։

Սրանից հետո թագավորը և Նրա հետ յեղողները բոլորը միասին մեծ խրախճանքով վերադասն Լոնդոն։

Մայրաքաղաք հասնելով թագավորն իսկուժն մի խիստ հրաման տրամակեց։

«Ովեր Լոնդոնի բնակիչներ չեն և կամ ոինչ չե մի ամբողջ տարի չեն ապրել այս մայրաքաղաքում, անմիջապես սլիտի թողնեն քաղաքը, ալլավես կոլխատվեն անհնագանդության համար», Ապստամբներին ուվին թագավորական հրովարտական ուղիւր և ահազին գժված ությանը ցրեցին յերերը։

Գյուղացիք թագավորական հրովարտակները ձեռքներին տուն վերագանակալով, ամենալավ պարզամտությամբ հավատում ելին, թե ձեռք են բերել ազատություն և վորոշ իրավունքներ։

Սակայն շուտով իրենց կաշու վրա զգացին, թե ինչ արժեք են ներկայացնում թագավորի հանդիսավոր խոսանությունները և արքունական կնիքով կնքված ազատարար հրովարտակները։

Հենց վոր հաջողվեց մաքրել Լոնդոնը ապրատամբներից, իսկուն յրվեցին ամեն մի տեղ ուրիշ հրովարտակներ, թե «ավ սիրում ե թագավորին և զնահատում ե նրա պատիվ» թող ձին նստի և սպառազինված զա մարտքաղաք»։

Յերեք որից հետո Լոնդոնում համարվեց 40,000 շատ լավ զինված տապեաններ, ձիավոր բարոններ, կարգածատերեր իրենց ծառաներով, կազմվեց գատավորների մի հանձնախումբ ըստ քաղաքագլխի նախագահությամբ, վորն սկսեց դատել կառավարության ձեռքն ընկած խոռվարներին։ Միքիչ հետո այսպիսէ հանձնաժողովներ սկսեցին կազմակերպվել զանազան աեղերում պետական պաշտոնյաններից և կալվածատերերից։ Թամիկեցան արյան գետեր, յերկիրը ծածկվեց կախազաններով, վորոնցից լուրաւանչուրի վրա ճռճճում եին 9-10 դիւեկներ։

Թագավորի ազատարար հրովարտակների մասին այսու խոսք անկամ չեք լինում։

լավ զինված մի խումբ և յեկավ թագավորին ողոնության:

Ազատամբների մեջ չդանսվեց մինը, վոր կարողանար Տայերին փախարինել, իսկ թագավորին ոգնության հասնողների լեռալը մեծ խըռովություն ձգեց նրանց շարքերի մեջ: Այս բոլորը նրանց ավելի զիջող դարձրին: Իր կողմից թագավորն ել անվտանգ համարեց մի անգամից սանձը քաշել և հրամացեց տալ ազատամբներին ազատագրական հրովարտակներ, առանց այն հավելումների, վոր խնդրում եր Տայլերը: Հետո թագավորը հենց այստեղ դաշտի մեջ ասպետ ձեռնադրեց քաղաքագլուխ Ռւելվորսին՝ ինչպես և Լոնդոնի վաճառականներից իր միքանի ազգեցիկ և հարուստ կողմակիցներին:

Մըանից հետո թագավորը և նրա հետ լեզուները բոլորը միասին մեծ խրախճանքով վերադարձան Լոնդոն:

Մայրաքաղաք համակով թագավորն իսկուն մի խիստ հրաման արձակեց:

«Ովքեր Լոնդոնի բնակիչներ չեն և կամ մինչեւ մի աժքողջ տարի չեն ապրել այս մայրաքաղաքում, անմիջապես պիտի թուղնեն քաղաքը, այլապես կգլխաւովեն անհնագանդության համար: Ազատամբներին ավելի թագավորական հրովարտակը և ահազին գժվա ությամբ ցրեցին լեռերի խորքերը:»

Գյուղացիք թագավորական հրովարտակները ձեռքներին տուն վերադառնալով, ամենայն պարզամտությամբ հավատում ելին, թե ձեռք են ըերել ազատություն և վորոշ իրավունքներ:

Սակայն շուտում իրենց կաշու վրա զգացին, թե ինչ արժեք են ներկայացնում թագավորի հանգիստվար խոնառները և արքունական կնիքով կնքված ազատարար հրովարտակները:

Նենց վոր հաջողվեց մաքրել Լոնդոնը ապրատամբներից, իսկուն ցրվեցին ամեն մի տեղուրիշ հրովարտակներ, թե «սվ սիրում ե թագավորին և դնահատում ե նրա պատիվը՝ թողձին նստի և սպառազինված զա մարտքաղաք»:

Ցերեք որից հետո Լոնդոնում համարվեց 40,000 շատ լավ զինված ասպետներ, ձիավոր բարոններ, կարգածատերեր իրենց ծառաներով. Կազմվեց դատավորների մի հանձնախումբ լորդ քաղաքաղլիխի նախագահությամբ, վորն սկսեց դատել կառավարության ձեռքն ընկած խոռվարաներին: Միքիչ հետո այսպիսի հանձնաժողովները սկսեցին կազմակերպվել զանազան տեղերում պետական պաշտոնյաներից և կալվածատերերից: Թափվեցան արյան գետեր, լեռերի ընծածկեցին կախաղաններով. վորոնցից լուրաքանչչուրի վրա ճռճվում ելին 9-10 դիտկներ:

Թագավորի ազատարար հրովարտակների մասին այլիս խոսք անգամ չեր լինում:

### Յ. ԱՏԵՓԱՆ ՌԱԶԻՆ

Համբերությունը կրտքեց. — 1670 թ. Ռուսականություն Ալեքսանդր Միխալովիչ ցարի ժամանակակից կառավարության համար ահռելի դեպքեր տեղի ունեցած Ռուսաստանի ամբողջ հարավարևելյան կեսը բռնկվեց ժողովրդական ազգաւատամբությամբ:

Դյուդից զուղ, քաղաքից քաղաք թափառում ելին գյուղացիների և կաղակների հրոսակախըմբեր, դատում և պատժում ելին կալվածատերերին ու քաղաքապետներին: Ալրվում ելին կալվածքները, խփվում ելին զանգերը, ժողովուրդը զինվում եր և հայտարարում վերջ հին ճորտական դրության: Բոլորը ցանկանում ելին շաղատ կաղակներ լինելու: Սկսվեցին այսպես ասած «արտոնյալ տարիներ» — առանց հարկերի, առանց տուրքի, առանց կառավարչի: Դյուղացիները դադարեցին վճարել հարկերն ու պարտքերը, և վորպեսզի ապագայում վոչ վոք չմտածի պահանջել ապառիկները կամ պարտքերը, ապստամբաված դյուղացիները հարձակվում ելին արխիմետի և գրասենյակների վրա, վատում ելին վափերգրերը և դատարանական գործերը: Կառավարությունը չսպասելով հարձակման, ուղարկում եր դորավարներին ջնջելու անհնաղանդներին:

Խոր արծանացել ելին ապստամբության պատճառները:

XVII դարի սկզբում Մասկվայի թագավորը համախմբեց Ռուսաստանի բազմաթիվ հողատերի խմաններին և կազմեց Մոսկովյան ոհծ թագավորությունը: Մական այս քաղաքական միացումը գյուղացիությանը չտվեց ազտություններ, չթեթեացրեց նրա դրությունը: Պաշտօնյա կալվածատերերն ու ազնվականները նեցուկ ելին Մոսկովյան թագավորի դահին, ուստի և նրանց քմահաճուքը դեպի գյուղացիները վոչ մի բանով չեր սանձահարվում:

Կալվածատերերի ծանր հարկերից, նրանց ձեծից, քմահաճուքներից և տանջանքներից ժողովուրդը փախչում եր:

Դեռ XVII դարի սկզբում ամրող շրջաններ դատարկվել ելին: Հետո փախուստը ել ավելի շատացավ: Փախչում ելին ճորտերը, փախչում ելին կալվածատիրական գյուղացիները և զինվորները: Այս փախուստների առաջն առնելու համար պետությունը միջոցներ եր ձեռք առնում: Նա ամեն կողմ լրտեսներ եր ուղարկում, վորոնք ամեն կերպ աշխատում ելին բռնել փախչողներին, բռնվածներին մարակներով ծեծում ելին և վերաբնակեցնում իրենց նախկին տեղերում:

Այս խիստ միջոցներն այնուամենայնիվ չկարողացան զսպել անբավականներին։ Մի քանիսները հայտարարում ելին, թե չեն հիշում վոր կալվածատերերին են պատկանել, մյուսները թագ ելին կենում և կազմում ավագակացին խըմբեր։

Վոլդայի խիտ անտառները և Դոնի ընդարձակ դաշտերը դառնում ելին հուսալի ապաստաններ այն բոլորի համար, վորոնք նեղված ելին կյանքից և Ռուսաստանի կարգերից։ Հենց այստեղ կազակների մեջ, ազատ Դոնի և ընդարձակ Վոլգայի վրա 250 տարի առաջ տեղի ունեցավ այն շարժումը, վոր պատմության մեջ կոչվում և Ստեփան Ռազինի ապստամբություն։

Ռազինի վիճակը.— Ստեփան Տիմաֆեյևիչը Դոնի կազակներից եր: 1667թ. նա 40 տարեկան եր։ Ռազինը միջանասակ, ամուլ, հսկայական կազմվածքով մարդ եր։ Նա ապշեցում եր բոլորին իր անվախ համարձակությամբ, վոչ մի վըտանգ չկարողացավ նրան վախեցնել և կանգնեցնել. զարմանալի տոկունությամբ նա տարավ պատերազմների ամեն տեսակ դժվարություններն ու աղետները։

Ստեփանի առաջին հարձակումների լուրը հասավ և Մոսկվայի կառավարությանը։ 1667թվի սկզբին Մոսկվայից գրում ելին Աստրախանի քառականքներին. «Դոնում հավաքվում են բազմաթիվ դաքանքեր և կանենում են գնալ կողովներու վոլգայի նավերը, վերցնել Յարիցինը և այսակ հաստատվել»։

Վասոքի արժանացրին վորպես քաջ, անհաղթելի ատամաննի. շնորհիվ այդ փառքի նրա խումբն թերեց որ աճեց և հասավ 2000 մարդու։ Ստեփանն իր քաջությամբ այնպիսի միծ ազդեցություն եր գործում իր ընկերների վրա, վոր վերջիններս պատրաստ ելին նրա մի խոսքով վերջիններս ընկնելու։ Իզուր չեր, վոր օջուրն ու կրակն ընկնելու։ Իզուր չեր, վոր նրա մասին տարածվել եր այն կարծիքը, թենա կախարդ ե, թե նա այնպիսի կախարդական ուժունի, վոր գնդակն անդամ չի պատի։ Ռազինի և նրա քաջերի մասին ժողովրդի մեջ առաջացել ելին բազմաթիվ յերգեր, վորոնք յերկար ժամանակ յերգվում ելին Վոլգայի ափերին։

Սարատովից փոքր ինչ ներքեւ կան մի քանի ապառաժներ, սահման-վորոշ վայրեր, վորոնք այժմս ել կոչվում են և Ստեփանկա Ռազինի ժայռեր։ Այս լեռների գագաթներից ատամանը դիտում եր Վոլգայի վրա լողացող նավերը և կողապտում նրանց։

Ռազինի ավագակալին հարձակումների լուրը հասավ և Մոսկվայի կառավարությանը։ 1667թվի սկզբին Մոսկվայից գրում ելին Աստրախանի քառականքներին. «Դոնում հավաքվում են բազմաթիվ դաքանքեր և կանենում են գնալ կողովներու վոլգայի նավերը, վերցնել Յարիցինը և այսակ հաստատվել»։

Ապստամբություն. - Հիրավի Ռազինն իր խըր բով շուտով զգաց, վոր Դոնի ափերը նեղ են իւրեաց համար։ Այդ ժամանակ նրա դիմում ծագեց մի համարձակ, լախ ծրադիր. իր կազակների հետ գուրս գալ Վոլգայի ափերը, վերցնել Յարիցին և Աստրախան քաղաքները և այսպիսով հասնել Կասպից ծովին։ Անաեղ արդեն մեծ տարածություններ կան, ու կարելի չե սփռվել, կարելի չե կողոպտել ծովի վրայի նավերը, հարձակվել պարսկական և բուխարական տփերի վրա, թուզ չտալ անցնելու և ցարական նավերին, վորոնք իջնում ելին Վոլգայի վրայով։ Իսկ Աստրախանից, մտածում եր Ստեփանը, հաջողության դեպքում կարելի չե բարձրանալ Վոլգայով դեպի բարձրում գտնված քաղաքները, գըրդաել այնուհեղ հասարակ ժողովուրդը, իսկ հետո Մոսկվան ել հեռու չե...

Սակայն իր այս մտադրության իրագործման համար հարկավոր եր ավելի մեծ ամրուս հավաքել. և լրացնել իր ավտօգակախորի նոսրացած շարքերը։ Այս հեշտ եր անել, պետք եր միայն ավելի մեծ խուժան վսաքի կանգնեցնել իրխանուիրի և զորագետների դեմ, իսկ այսպիսի խուժան վաղուց արգեն կար և պատրաստվում եր։  
1670 թ. ապրիլին Ստեփանի առաջնորդությամբ հավաքվեցալ 7000 մարդ՝ Ստեփանը վոր-

բոշեց գնալ ուղղակի Յարիցինի վրա՝ արելու ձանապարհին՝ գեռ Դանում միացավ Նրան Վոլգայի նշանափոք ավազակ Վասկա Ումս իր խըրմբով։ Ռազինը մոտեցավ Յարիցինին և շրջապատեց յերկու կողմից. կետի կողմից նավերով և ցամաքի՝ զորքով։ Յարիցինի զորապետ Տիմաֆեյ Տուրգենիը փոլ ծեց աղաշտպանվել. հրամացաց փակել քաղաքի դռները և լցնել թնդանոթները։ Սակայն մի քանի քաղաքացիներ, վոր կաշառված ելին Ռազինի կողմից՝ ներս թողին կաշառված էլին Այսպիսով քաղաքը շատ հեշտությամբ առնվեց։ Այս ժամանակ Ռազինին իմացըին, վոր բարձրից Վոլգայի վրայով գալիս եր վրա Մոսկավայի մի զորախոռնը 1000 հոգուց բարկացած, իսկ ներքենից, Աստրախանից գալիս ե զորապետ իշխան Լվովը 3000 աղեղնավորներով։

Ռազինը չփախեցավ. իր ուժն ավելի մեծ եր։ Մոսկավայի զորքն արդեն կանգնած եր Յարիցինից 7 վերստ հեռու. Ռազինն արագությամբ և անսպասելի կերպով հարձակվեց նրա վրա յերկու կողմից՝ ափից և նավերի վրայից. 500 աղեղնավոր սպանվեցան, առաջնորդներին կամ ձըգում ելին գետը կամ կախում ելին. Մնացածներին Ստեփանը պահեց իր մոտ և թիավար նշանակեց. նավերում։

Բայց հետո գալիս եր իշխան Լվովի զորքը.

Հսպասելով թշնամիներին, Ստեփանն ընդառաջ գնաց նրանց և հանդիպեց սև քարափի մոտ։ Այստեղ հաջողությունն ավելի հեշտ ձեռք բերվեց. Ռազինն իր նավերով դեռ չեր մոտեցել նրանց, յերբ աղեղնավորները կանչեցին։

«Վո՞յջուն քեզ հայրիկ, հաղթողդ մեր բոլոր կեղեքիների»։

Բոլորն անձնատուր յեղան առանց կռվի։ Առաջ-սորդներին կապեցին և հանձնեցին ատամանին, վորը՝ հանձնեց աղեղնավորներին դատը կտրելու, իսկ նրանք բոլորին կոսորեցին։

Դեռ Յարիցինում Ռազինին հայտնեցին, վոր Աստրախանի քաղաքացիները նրա կողմն ևն և սպասում են նրան, դժվար չի լինի առնել քաղաքը։ Այս սպատճառով Ստեփանը վորոշեց նախուղերվել այնտեղ, իսկ բարձրի քաղաքներն ուղարկեց իր մարդկանց՝ նամակներով կոչ անելով ժողովրդին ապստամքին։

Ռազինն ոգտվելով զիշերվա մթությունից, իր հրօսակախմբի մի մասով անցավ քաղաքի շուրջը և բարձրացավ պարսպի վրա. տրվարձանի բնակիչները և աղեղնավորները ձեռք ելին մեկնում պաշարողներին՝ ոգնելով նրանց բարձրանալ պարսպի վրա։ Թսդաց թնդանոթների հինգ արձակում — վոր նախապես վորոշված ել երևադդանշան՝ քաղաքը հանձնելու։

Աղեղնավորներն ու արվածանների բնակիչները հարձակվեցան կոտորելու կառավարիչներին, զրագիրներին, աղնվականներին, իշխանների վարդիներին։ Նրանց ոգնում ելին կաղակները, վոր արդեն մտել ելին քաղաք։ Ռազինը յերեք շաբաթ քեֆ արեց Աստրախանում։

Ամբոխը սոսկալի կերպով կատաղած ինքն եր պահանջում Ռազինից նոր մահապատիժներ տալ բարձր դասից կենդանի մնացածներին։ Ամենոր ատամանը նստում եր միտրոպոլիտի ապարանքի դռների առջև հատուկ պատրաստված տեղը, նրա մոտ բերում ելին մահվան դատապարտվածներին։ Բավական եր, վոր Ստեփանը ձեռքով նշան տար՝ անմիջապես տանում ելին՝ մինին վառելու, մյուսի ձեռքը կտրելու, յերրորդին պլխատելու և ացն։ Իսկ յեթե պատահմամբ խելքին փշեր վողորմիլ մի այնպիսի մարդու, վորն արդեն պատրաստվել եր մեռնելու, այդպիսի բաղդին արժանացողի կապանքներն արձակում ելին և ազատ թողնում։ Ստեփանը զորապետի դրասենյակում վառեց բոլոր թղթերը և պարձենում եր, թե մի որ ել բարձրին, այսինքն արքունի պալատի թղթերը պիտի վառի։

Ռազինը հուշիսի վերջին մեկնեց Աստրախանից Վոլգայով գեպի վեր, նրա հետ գնում եր նից Վոլգայով գեպի վեր, նրա հետ գնում եր

8000 զինվոր ՀՅՅ նավերով. քայի դրանից 2000 ձիավոր ել ցամաքով։ Վորքան նա առաջանում եր դեպի վեր Վոլգայով, այնքան նրա զորքն ավելանալով ավելանում եր։ Վոլգայի զետափնյա քաղաքներից յերկուսը՝ Սարատովը և Սամարան, յենթարկվեցան կաղակների կողոպտման։ Նրանց հետ վարչեցին ճիշտ այնպես, ինչպես Աստրախանի հետ։ Մինչ այս, Ստեփանի պատվիրակները նրա նամակներով ցրվեցան ամբողջ պետության մեջ, մտան նույնիսկ Մոսկվա, հյուսիսային քաղաքները, յեղան նույնիսկ Արխանգելսկում։ Այս նամակներով Ստեփանը կոչ եր անում բոլորին ողնել իրեն. ընդդեմ ընդհանուր թշնամիների - իշխանների, զորավարների և հրամանատարների։ Խոստանում եր բոլորին հարըստություն և ազատություն, հաստատելու ամբողջ Ռուսաստանում կաղակների տիրապետություն և ընդհանուր հավասարություն։

Ամեն տեղ սիրով լսում և կատարում ելին Մագինի կոչերը և խոսքից շուտով գործի ելին անցնում։ Ամեն տեղ շարժվեցին դյուղացիները, ճորտերը, աղեղնավորները և արհեստավորները. սկսեցին հրդեհել ազնվականների և իշխանների կալվածքները, թալանել հարուստ մարդկանց. քաղաքներում հարձակվում ելին զորապետների զրասենյակների վրա, ծեծում ելին պաշտոնյա-

ներին, այրում ելին վավերագրերը, ֆողովրդական կիրքը բորբոքվել եր. դյուղացիները չելին բավականանում կալվածատերերին, նրանց կանանց ու յերեխաներին սպանելով, այլև հաճախ նրանց տանջանքների ելին յենթարկում։ Ապրատամբության բացը բռնկեց ահագին տարածություն, ամբողջ ստորին ու միջին Վոլգան, և ապա արևելք ու արևմուտք (այժմյան Սարատովի, Սամարայի. Սիմբիրսկի, Կազանի, Նիժնի-Նովգորոդի նահանգներ)։

Ապստամբվեցան, բացի ոռւս գյուղացիներից, նաև այս կողմերում ապրող «ազագգիները» - չերեմիսները, մարդվանները, չուվաշները և կալմիկները, նրանք գժգոն ելին Մոսկվայի կառավարության դրած ծանր հարկերից և պաշտոնյաների ճնշումից։

Հայտնի չե, թե վորքան պիտի լնողայնվեր ու տարածվեր այս շարժումը, յեթե վոր Ռազինի հաջողությունը չվերջանար Սիմբիրսկի մոտ։ Մոտ մի ամիս նա մնաց այնտեղ, տիրեց արվարձաններին, բայց չկարողացավ առնել քաղաքի միջնաբերզը։ Այստեղ ամուր նստել եր Միլոսլավսկի զորապետը լավ վարժված զորքի վորքիկ զորամասով և հաջողությամբ յետ եր մղում Ռազինի հարձակումները։ Պաշարվածներն արդեն թուլացել ելին (Չուրը շեր բավականացնում)։

յերք կաղանից ոգնության հասավ (1670 թ.: հոկտեմբերին) Բարյատինսկին իր զորքերով Տեղի ունեցավ տաք կտիվ, դյուզացիների և կազակների անկանոն մասսաները չկարողացան դիմադրել յարական կանոնավոր զորքերի գրահին և տեղի արվին. ինքը Խաղնը վերավորվեց վոտից և գլխից, գիշերը նա փախտվ կազակների մի փոքրիկ խմբով, թողնելով դյուզացիներին ու կազակներին անտառնելի դրության մեջ:

Առավոտյան Խաղինի կազմակիցները, լսելով առաջնորդի փախստյան լուրը, սարսափահար դիմեցին դեպի Վոլգայի ափերը, հուսալով նավակներով փախչել ու աղասիվել, բայց Բարյատինսկին հրամանեց հետապնդել նրանց և թրշվառներն ստիպված յեղան ջուրը թափվել և խեղդվել: Մոտ 600 մարդ բռնվեցին ու դիմատվեցին:

Սիմբիրսկի պարտությունից հետո Ստեփան Ռազինի բաղդավոր աստղը խափարեց: Սամարայում և Սարատովում, ուր նա կամենում եր ապաստանել, նրան թուց չտվին. այն ժամանակ նա փախավ դեպի Դոն: Բայց այնտեղ պետքանը հավատարիմ մնացած տնտեսատեր ունեոր կազակների կուսակցությունը գերակշռեց և, յերբ վոր Ռազինը յերեաց Դոնում, սրան բռնեցին և շղթայեցին:

Գլխատումն. — Մի հազվագեպ, պարզ է դուրս առավոտ բացվեց Մոսկվայում 1671 թվի հունիսի 4-ին: Կեսորվա մոտ եր: Անամպ յերկնքի վրա կուրացուցիչ կերպով փայլում եր արեգակը, թեթև, զով քամին մեղմացնում եր նրա ալրող ճառագալթները: Քաղաքի փողոցներով անցնում ելին ժողովրդի զանազան խմբեր, նրանք բղավում ելին և աղմկում: Խսկուն կարելի յեր նկատել, վոր այս մեծ քաղաքի սովորական անց ու դարձը չեր, վոր ամբոխին միացնում եր մի ինչ վոր ընդհանուր նպատակ, և վոր նա շարժվում ե մի ուղղությամբ: Նիրավի, մոսկվացիք գնում ելին դեպի հրապարակներից մեկը: Շուտով ալգտեղ հավաքվեց համարյա ամբողջ Մոսկվան: Հարյուրավոր, հազարավոր աշքեր ուշագրությամբ նայում ելին իրենց արջի ընկած ճանապարհին, սպասելով մի ինչվոր բանի:

Մոտ մի ժամ անցավ, և հանկարծ ամբոխի առաջին շարքերից լսվեցին օբերում են, բերում են» աղաղակը:

Ամբոխը խմբվեց, յետին շարջերը ճնշում ելին առաջիններին. տեղ տեղ լսվեցին աղաղակներ:

«Վայ, արորեցիք! — «Ինչ ես հրում, հրեշտ: Զգուշ, յեղբայրներ, զգուշ!»

Ճանապարհի վրա յերեաց մի տարորինակ զընացք. մի մեծ սալլ, վորի վրա ցից կանգնեցրած եր կախաղանը՝ յերկու պյուներ վերևից միացրած դերանով. այս սյուների արանքում կանգնած եր մի մարդ ՅՅ տարեկան, միջահասակ, լայնաթիկունք և լայն կրծքով, շեկ լայն մորուքով և գլխի խճճված գանգուր մազերով. նա առանց գլխարկի յեր և ցնցոտի հազած։ Այս մարդու խիստ ջարդված դեմքն այնուամենայնիվ արտահայտում եր ֆիզիքական մեծ ուժ և կարողություն։ Յերկաթե շղթալով նա կապված եր վզից կախաղանին, իսկ ձեռները և վոտները շղթաներով ամբացրած եր սալլին։ Սալլի յետից սալթաքելով դնում եր մի ուրիշ մարդ, վզից շղթալով կապված սալլի կրծքից։ Բերում ելին Մոսկվա պատժելու կազակներին նշանավոր ատաման և խոռվարար Ստեփան Ռազինին և նրա յեղբայր Ֆրոլկայն։

— Ճանապարհ։ Ճանապարհ տվեք, — գոչեց պահակների ավագը, յերբ վոր գնացքը մոտեցավ ամբոխին։

Ամբոխը լուս յետ քաշվեց և նրա միջով անցան կալանավորները։ Մոսկովցիք հառած աչքերով նայում ելին սալլի վրա կանգնած Ռազինին։ մի քանիսներն ատելությամբ, մկուսները խղճալով և համակրանքով։ Իսկ նա, կանգնած

եր անտարրեր և աչքերը խոնարհած, կարծես շուքը վոչ վոք չկար, կարծես նրա վրա չելին հենվուն ծանր շղթաները, յերբ ուայլ փոսելոն եր լնկնում։

Ամբոխն առաջնորդեց գնացքին քաղաք մինչև դառարան, ուր տանում ելին այս յերկու կալանավորներին դատելու։ Այս դեպքից յերկու որ հետո, 1671թ.հունիսի 6-ին, կարմիր հրապարակի վրա տեղի ունեցավ պատիժը և այս առիթով նորից ահազին ամբոխ եր հավաքվել։ Ստեփանին իր յեղբայր Ֆրոլկայի հետ բարձրացրին նրանց գլխատման տեղը. բայց այս անգամ նա այսու միննույն Ստենկան չեր, վորին տեսել ելին մուկովցիները, յերբ նա մտավ Մոսկվա։ Նրա ամբողջ մարմինը ներկայացնում եր մի այսադակ այլունությած, ուռած զանգված։ Յերկու որ շարունակ դահիճները տանջում ելին նրան բանտում, բայց չկարողացան նրան ստիպել խոսելու. բոլոր տանջանքների ժամանակ, նույնիսկ կրակի վրա պառկած Ստենկան համառաբար լուս եր։ Նա միայն մի անգամ խոսեց, յերբ դահիճները դադար տվին նրան ու սկսեցին տանջել Ֆրոլկայն, վորը ցավից սկսել եր բրդավեր։

— Այս գու թուլամորթ, ասաց Ստեփանը։ Հիշիր մեր նախկին կյանքը. մենք վառք ու պատվով

պալրեցինք, հրամայեցինք հաղարավոր մարդկանց, այժմս ել պետք եքաջությամբ տանենք դժբախտությունը։ Միթե դու ցավ ե պատճառում քեզ։ Կարծես պատավ ե ասեղով ծակում։

Ազգական դահիճները Ստենկալից վոչինչ չկարողացան իմանալ և իշխանները վորոշեցին զւրխատել յերկու յեղբայրներին։ Թարտուղարը կարդաց յերկար դատավճիռը, վորտեղ հիշված երդատապարտվա ների բոլոր հանցանքները։ Ստեփանը հանգիստ լսեց բոլորը։ Դահիճը բռնեց նրա թից; Ստեփանը դարձավ գեղափառ յեկեղեցին, խաչակիքեց, խոնարհվեց գեղի չորս կողմէ և ասաց. «Ներեցեք»։

Նրան դրին յերկու տախտակների մեջ, դահիճը սկզբում կտրեց նրա աջ ձեռքը արմունկից, հետո ձախ վոտը ծնկից։ Ստենկան ցուց չտվեց անգամ, թե ցավ ե զգում։

Ֆրոլկան տեսնելով յեղբոր տանջանքները, վորպիսին սպասում եր և իրեն, այլալիքեց և զուշեց։

— Յես զիսեմ պետական մի գաղտնիք։

Այս նշանակում եր, վոր նա կամենում եր մի այնպիսի գաղտնիք հայտնել, վոր սկզբում չեր ուղում ասել։

— Լոիր, շուն, ասաց Ստեփանը։ Ալդ յեղավ նրա վերջին խոսքը։

Դահիճը գլխատեց նրան։

Նրա իրանը կարեցին և ցցելի վրա անցկացրին։ Դրուխը նույնպես ցցի վրա անցկացրին, փորոտիքը շներին գցեցին։

Ֆրոլկալի գլխատումը հետաձգեցին, վորովհետեւ նա խոստացավ ցուց տալ մի գանձի տեղ, վորը սական չգտնվեց։ Ֆրոլկալին դատապարտեցին մշտնջենական բանտարկության։

#### 4. ՊՈՒԳԱՉՈՎՑԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Այս ապստամբությունը տարածվեց սրանից մեկ ու կես դար առաջ։ Անդրվոլոցան ամբողջ շրջանում, Ռւբալցան և Կիրգիզան դաշտերում, Ռւբալի հանքալին դորձարաններում, Կամա գետի այն կողմը և Ռւֆալի, Կազանի, Պենզալի, Սիբիրի, Տամբովի ու Սարատովի նահանգներում։

Պուգաչովն իրեն անվանելով Պետրոս III, կոչ արեց ժողովրդին վոչնչացնել ճորտությունը և վրեժ առնել իրենց նեղող կալվածատերերից։ Նա իր մի հրովարտակի մեջ զրում եր այսպես. «Այս մեր անվանական հրովարտակով իրավունք ենք շնորհում մինչև այժմս կալվածատերերի հըպատակության տակ գտնված բոլոր գրուղացիներին՝ հավատարիմ հպատակ դաննալ մեր թաղին և վարձատրում ենք ձեզ պարզեներով հին.

կրոնք դավանելու և միջուք թողնելու իրավունքով, նվիրում ենք անձնական և այլ դրամական տուրքերը, վարձատրում ենք վարելահողերով, արոտատեղիներով, անտառներով, ձկնորսության իրավունքով, առանց փորեե հարկի ու տուրքի, ազատում ենք բոլոր չարագործ ազնվականների և կաշառակեր դատավորների նշանակում տուրքերից և ծանրաբեռնություններից»:

Ճորժությունից ազստվելու և հոդ տալու խոստումը Պուգաչովի դրաշակի տակ հավաքեց ճորժության մեջ տառապող հազմորավոր գլուզացիներ. Այդ ժամանակ կառավարությունը սաստիկ անհանգստացավ և ահազին զորք ուղարկեց ապստամբած գլուզացիների դեմ, սակայն արողջ լերկու տարի չկարողացան ճնշել Պուգաչովին. Նույնիսկ նա միքանի անդամ ջարդեց բազմաթիվ վաշտեր և տիրեց միքանի քաղաքներ (Աստրախան, Յարիցին և այլն). Շատ ապնվականներ կողոպալվեցան ապստամբած ժողովրդի ձեռքից. Պուգաչովյան խոռվությունները ցնցեցին պետությունը վերեից մինչև ներքեւ: Նա աչքի լեր ընկնում խիստ գաղանությամբ և մարդկանց չտեսնված կոսորածով: Սկզբում Պուգաչովի հրոսակախմբերը վառում, կոտորում, կախում ելին՝ գլուզացիներին հակառակ դնացողներին: Հետո, լերը Պուգաչովը հաղթվեց, կառա-

վարտկան գորքերն անխնա կոտորեցին բոլոր կազմակներին: Բանտերն այնքան լիքն եցին, վորանարկվածները մեռնում եին նեղվածքությունից և քաղցից: Հաղարավոր գլուղացիներ տամանակիր աշխատանքների և աքսորի ուղարկվեցան, և յեթե մեկը փոքր ինչ դիմադրություն եր ցուց տալիս՝ տեղն ու տեղը սպանում ելին: Կաղվածաերերն ոզնում ելին կառավարությանը և կասկածելի ճորժութին հանձնում ելին նրանց՝ խնդրելով պատժել մարակով և ականջները կրտրելով: Պուշկինն այդ առթիվ ասում է. «Այս կոտորածը սոսկալի լեր. միքանիսին ցցերի վրա ելին նստեցնում, մլուսներին կողերից կախում կարթերից. նրանց ել, նախ կտրտում ելին ձեռքերն ու վորքերը և հետո գլխատում, մնացածներին ներում ելին՝ կտրելով քիթ ու ականջները»:

Պուգաչովը ել գլխատվեց Մոսկվայում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- |   |    |
|---|----|
| 1. Յրանոփական գյուղացիների ապստամ- եջ<br>բությունը. . . . . | 3  |
| 2. Թագավորն ու ժողովուրդը. . . . .                          | 10 |
| 3. Ստեփան Ռազին. . . . .                                    | 20 |
| 4. Պուգաչովիան ապստամբությունը. . . . .                     | 35 |






ՀՀ0894000000309

Եթե առաջարկությունը պահպանվի Ա  
Յ մասնակիություն  
ՕԼ պահպանության մասնակիություն  
ՕՏ ազգային պահպանության մասնակիություն  
ԵԵ պահպանության մասնակիություն



NL0182965



ԳՐԱԴԱՐԱՆ

Հա 258

Կ. 8 /

Տ. 7 0